Վարուժան Ներսեսյան

Ծնվել է 1973թ. օգոստոսի 31-ին, Երևանում:

Կրթություն և վերապատրաստում՝

1991-1996թթ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժին, որակավորումը՝ միջազգայնագետ-պատմաբան,

1996-1998թթ. ՀՀ կառավարման ակադեմիա, որակավորումը՝ պետական ծառայող,

1999թ. հունվար-մարտ ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի դիվանագետների համար հատուկ դասընթաց (Վիեննայի դիվանագիտական ակադեմիա),

1999թ. Բրիտանական «Նոու Հաու» հիմնադրամի կողմից կազմակերպված դիվանագիտական դասընթացների ծրագիր (Բրյուսել),

2004թ. հոկտեմբեր 1999թ. ԵԱՀԿ Վիեննայի փաստաթղթի վերաբերյալ դասընթաց կենտրոնասիական և կովկասյան տարածաշրջանների համար (Ստոկհոլմ),

2005թ.փետրվար-մարտ Կանխարգելիչ դիվանագիտության և հակամարտությունների կարգավորման վերաբերյալ միջազգային առաջնորդների ծրագիր (Վաշինգտոն),

2007-2009թթ. Ֆլեթչերի դիվանագիտության և իրավունքի դպրոց, Թաֆթսի համալսարան (Բոստոն), կոչումը՝ միջազգային հարաբերությունների մագիստրոս:

Աշխատանքային գործունեություն՝

1997-1998թթ. ՀՀ ԱԳՆ սպառազինությունների և միջազգային անվտանգության վարչության կցորդ,

1998-1999թթ. ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության բաժնի կցորդ,

1999-2000թթ. ԱԳՆ եվրոպական կառույցների վարչության երրորդ քարտուղար, ԵԱՀԿ հարցերի պատասխանատու,

2000-2003թթ. ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունում մշտական ներկայացուցչի տեղակալ (Վիեննա),

2003-2005թթ. ՀՀ ԱԳՆ ՍՎՄԱ վարչության սովորական սպառազինությունների վերահսկման բաժնի պետ,

2005-2006թթ. ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության ԵԱՀԿ բաժնի պետ,

2006-2008թթ. Ազգային ժողովի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ,

2008-2012թթ. ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության խորհրդական, առաքելության ղեկավարի տեղակալ,
2012-2018թթ. ՀՀ նախագահի օգնական,
2018թ. ապրիլ-հոկտեմբեր ՀՀ վարչապետի օգնական,
2018-2021թթ. ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

2021թ. հուլիսի 16-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան՝ երեք տարի ժամկետով (նստավայրը՝ Լոնդոն):

Դիվանագիտական աստիճան՝
արտակարգ և լիազոր դեսպան:

Պարգևներ՝
«Մխիթար Գոշ» մեդալ:

Ակադեմիական գործունեություն՝
2014-2016թթ. ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասախոսություններ է կարդացել «ՀՀ արտաքին քաղաքականությունն ու տարածաշրջանային անվտանգությունը» թեմայով:

Օտար լեզուների իմացություն՝
ռուսերեն, անգլերեն:

Ընտանեկան կարգավիճակ՝
ամուսնացած է, ունի երեք զավակ: